ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՎՇԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի հանրապետության Արարատի մարզի
Ավշար համայնք, գյուղ Ավշար Անդրանիկի 1
Հեռախոս՝ 4-21-79

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

« 8» դեկտեմբերի 2011թվականի N 18- Ն

ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2012թ. ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ, 10-րդ, 11-րդ հոդվածների , հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ համայնքի ավագանին որոշում է.
Հաստատել համայնքի տարածքում 2012թ. տեղական տուրքերի և վճարների հետևյալ դրույքաչափերը.

1. ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտա-ռապետաշինարարական նախագծին համապատասխան՝ նոր շենքերի, շինությունների (ներառյալ՝ ոչ հիմնական) շինարարության (տեղադրման) թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է՝

հիմնական օբյեկտների համար՝

1/ մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար տեղական տուրքը սահմանվում է 5000 դրամ:

2/ սույն կետի «ա» ենթակետով չնախատեսված օբյեկտների համար՝

ա/ 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար տեղական տուրքը սահմանվում է 5000 դրամ:

բ/ 501-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար տեղական տուրքը սահմանվում է 7000 դրամ:

գ/ 1001- ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար տեղական տուրքը սահմանվում է 10000 դրամ:

Ոչ հիմնական շինությունների տեղադրման համար

դ/ մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների տեղական տուրքը սահմանվում է քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար տեղական տուրքը սահմանվում է 1500 դրամ:

ե/ 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ մինչև 2500 դրամ:

2. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման, արդիականացման աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի) համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

1/ չի նախատեսվում կցակառույցներրի, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխության համար տեղական տուրքը սահմանվում է 1500 դրամ.

2/ բացի օբյեկտի վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի

գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխություն, ապա, բացի սույն կետի «ա» ենթակետով սահմանված դրույքաչափի, կիրառվում են նաև նոր շինության համար սույն հոդվածի 1-ին կետով սահմանված նորմերը՝ օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխության մասով.

3/ նախատեսվում է միայն կառույցների, վերակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ստորգետնյա) շինարարություն կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխություն, ապա, սույն օրենքի իմաստով, այն համարվում է նոր շինություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին կետով սահմանված նորմաները:

3. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է 2500 դրամ:

4. Համայնքի տարածքում տեղական տուրքը սահմանվում է՝

1) Ոգելից խմիչքի վաճառքի թույլտվության համար հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում թույլտվության համար տեղական տորքը սահմանվում է յուրաքանչյուր եռամսյակի համար՝ 9000 դրամ

2) Ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանվում է 9000 դրամ:

5. Համայնքի տարածքում

1/ բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է. յուրաքանչյուր օրվա համար 350 դրամ.

2/ հեղուկ վառելիքի, տեխնիկական հեղուկների, հեղուկացված գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի, տեխնիկական հեղուկների, հեղուկացված գազերի վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 150000 դրամ:

6. Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեներ և կրկնօրինակներ տրամադրելու համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է- 500 դրամ:

7. Համայնքի տարածքում առևտրի,հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտները, բաղնիքները /սաունաները/, խաղատները ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է՝

ա/ առևտրի օբյեկտների համար --- 25000 դրամ:

8. Համայնքի տատածքում մարդատար տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է - 5000 դրամ:

Օրենքի 10-րդ հոդվածի 1-ին, 2-րդ, 3-րդ կետերով սահմանված դրույքաչափերը հաստատվել է 0,5 գործակիցը կիրառված:

1. **Տեղական վճարներ.**

ա/ համայնքի տարածքում շինարարության կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու, շինարարության ավարտը փաստագրելու համար՝ մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանվում է – 1000 դրամ:

բ/ համայնքի տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալուության տրամադրելու դեպքերում անհրաժեշտ չափագրական և այլ նման աշխատանքների համար համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանվում է – 500 դրամ:

գ/ համայնքի կողմից մրցույթներ և աճուրդներ կազմակերպելու հետ կապված ծախսերի փոխհատուցման համար՝ մասնակիցներից վճար սահմանվում է - 500 դրամ:

դ/ համայնքի կողմից աղբահանությունը կազմակերպելու համար՝ աղբահանության վճար սահմանվում է .

դա/ կենցաղային աղբի համար համայնքում բնակվող յուրաքնչյուր բնակչի համար սահմանվում է --- 200 դրամ

դբ/ ոչ կենցաղային և խոշոր եզրաչափի աղբի համար ըստ ծավալի՝ մեկ խորանարդ մետր աղբի համար սահմանվում է --- 500 դրամ

ե/ շինարարական և խոշոր եզրաչափի մեկ խորանարդ մետր աղբի հավաքման և տեղափոխման համար տրամադրվող թույլտվության վճար սահմանվում է՝ --- 100 դրամ

ԱՌԱՔԵԼՅԱՆ ԿԱՌԼԵՆ

ԲՈՒԴՈՒՄՅԱՆ ՄԱՅԻՍ

ԳԱՍՊԱՐՅԱՆ ՆՈՐԻԿ

ԽՈՒՐՇՈՒԴՅԱՆ ՍՄԲԱՏ

ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆ ԳԱԳԻԿ

ՄԻՆԱՍՅԱՆ ՀՈՎԻԿ

ՄԻՐԶՈՅԱՆ ՅՈՒՐԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍՈՒՐԻԿ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՎՇԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի հանրապետության Արարատի մարզի
Ավշար համայնք, գյուղ Ավշար Անդրանիկի 1
Հեռախոս՝ 4-21-79

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

« 8» դեկտեմբերի 2011թվականի N 19 - Ա

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16 հոդվածի 8 կետի, 27 հոդվածի, համայնքի ավագանին որոշում է.

1. Սահմանել համայնքի ղեկավարի աշխատավարձի դրույքաչափը 210000 /երկու հարյուր տաս հազար/ դրամ:

կողմ /7/

ԱՌԱՔԵԼՅԱՆ	ԿԱՌԼԵՆ
ԲՈՒԴՈՒՄՅԱՆ	ՄԱՅԻՍ
ԳԱՍՊԱՐՅԱՆ	ՆՈՐԻԿ
ԽՈՒՐՇՈՒԴՅԱՆ	ՍՄԲԱՏ
ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆ	ԳԱԳԻԿ
ՄԻՆԱՍՅԱՆ	ՀՈՎԻԿ
ՄԻՐԶՈՅԱՆ	ՅՈՒՐԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՍՈՒՐԻԿ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՎՇԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի հանրապետության Արարատի մարզի
Ավշար համայնք, գյուղ Ավշար Անդրանիկի 1
Հեռախոս՝ 4-21-79

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

« 8» դեկտեմբերի 2011թվականի N 20 - Ա

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 16-րդ հոդվածի 26 կտի, 32-րդ հոդվածի 5-րդ կետի, «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 70-րդ հոդվածի 5-րդ մասով, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ համայնքի ավագանին որոշում է.

Հաստատել համայնքի ղեկավարի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը 19, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը:

Հաստիքի անվանումը	Հաստիքային միավոր	Պաշտոնային դրույքաչափը
Հայեցողական պաշտոններ		
Համայնիք ղեկավարի տեղակալ	1	120000
Համայնիք ղեկավարի օգնական	1	110000
Համայնիք ղեկավարի խորհրդական	1	110000
Համայնքային ծառայության պաշտոններ		
Համայնքի ղեկավարի աշխատակազմի քարտուղար /1.2/	1	121000
Համայնիք ղեկավարի աշխատակազմի գլխավոր մասնագետ /2.3/	1	120000
Համայնիք ղեկավարի աշխատակազմի առաջատար մասնագետ /3.1/	2	105000
Համայնիք ղեկավարի աշխատակազմի առաջին կարգի մասնագետ /3.2/	2	103000
Համայնիք ղեկավարի աշխատակազմի երկրորդ կարգի մասնագետ /3.3/	2	80000
Տեխսպասարկման անձնակազմ		
Գործավար	1	65000
Հասարակական կարգի պահապան	5	70000
Վարորդ	1	75000

կողմ /7/

ԱՌԱՔԵԼՅԱՆ	ԿԱՌԼԵՆ
ԲՈՒԴՈՒՄՅԱՆ	ՄԱՅԻՍ
ԳԱՍՊԱՐՅԱՆ	ՆՈՐԻԿ
ԽՈՒՐՇՈՒԴՅԱՆ	ՍՄԲԱՏ
ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆ	ԳԱԳԻԿ
ՄԻՆԱՍՅԱՆ	ՀՈՎԻԿ
ՄԻՐԶՈՅԱՆ	ՅՈՒՐԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՍՈՒՐԻԿ ԳՐԻԳՈՐՅԱՆ